ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ

ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

06. 10. 2018, № 16/2

«ՇԻՐԱԿԻ Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ԵՎ ՌԵԿՏՈՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

ՇՊՀ հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Ղեկավարվելով «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 41-րդ կետի 2-րդ ենթակետով, հաշվի առնելով ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի նշանակման անհրաժեշտությունը, արձանագրելով, որ ՇՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի երեք հավակնորդներից որեւէ մեկը քվեարկության արդյունքներով չի ստացել հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելի քվե, ՇՊՀ հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1.1. Պրոռեկտոր Երվանդ Սերյոժի Սերոբյանին ազատել «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի պարտականությունները կատարելուց,

1.2. Երվանդ Սերյոժի Սերոբյանին նշանակել «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, կնքելով համապատասխան աշխատանքային պայմանագիր եւ սահմանել աշխատավարձ հաստիքացուցակով նախատեսված դրույքաչափով:

2. Հանձնարարել ՇՊՀ հիմնադրամի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Ե.Սերոբյանին, ՇՊՀ ՀԽ 2018 թ. օգոստոսի 30-ին ՀԽ նիստում կատարված ՇՊՀ կանոնադրության՝ 56 հոդվածի փոփոխությունը ներկայացնել պետական ռեգիստր՝ գրանցման համար, իսկ նախորդ նիստերում կանոնադրությունում կատարված փոփոխությունները առայժմ չներկայացնել պետական ռեգիստր գրանցման: Հանձնարարվել՝ այդ փոփոխությունները քննարկել համալսարանում, գիտական խորհրդում, ապա հոգաբարձուների խորհրդի նիստում, իսկ ընդունվելուց հետո՝ ներկայացնել գրանցման:

ՇՊՀ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Լ. ԲԱՐՍԵՂՅԱՆ